Հրահանգ

«Ինչպես գնել «ՀԿԵ»-ի գնացքների տոմս առցանց ռեժիմով». քայլ առ քայլ, սքրինշոթերով և բացատրություններով

Դուք կարող եք առցանց ռեժիմով տոմս գնել «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետևյալ գնացքների համար. միջազգային հաղորդակցության Երևան-Թբիլիսի-Երևան, Երևան-Բաթում-Երևան:

Ինտերնետում գնացքի տոմս գնելու համար անհրաժեշտ է ունենալ ինտերնետ հասանելիություն և բանկային քարտ:

Ձեռք բերելով ինտերնետային տոմս՝ դուք կստանաք գնման ութանիշ եզակի ծածկագիր: Գնացք նստելու համար՝ շրջանցելով տոմսարկղները, դուք գնացքի ուղեկցորդին եք ներկայացնում ստացված եզակի ծածկագիրն՝ անձնագրի հետ միասին:

Մեկ գործարքի միջոցով կարող եք ձեռք բերել առավելագույնը 8 տոմս 4 ուղևորի համար. 4 տոմս մեկ ուղղությամբ և 4 տոմս՝ նույն ուղևորների համար հակառակ ուղղությամբ: Մանկական տոմսեր միջազգային գնացքների համար վաճառվում են միայն մեծահասակների տոմսերի հետ միասին, միայն մանկական տոմսեր չեն վաճառվում:



Քայլ 1. Գրանցում. Մտեք «ՀԿԵ» ՓԲԸ-ի վեբ-կայք https://www.railway.am/ru, սեղմեք «Առցանց տոմսեր» պատուհանը:



Քայլ 2. Տվյալների մուտքագրում գրանցման համար: Սահմանեք մուտքաբառը և գաղտնաբառը, մուտքագրեք ձեր էլ.փոստը, ազգանունը, անունը և հեռախոսահամարը /ըստ ցանկության/: Ուշադրություն դարձրեք անվան, ազգանվան և անձնական տեղեկատվության ճիշտ նշմանը:

Պարամետրերը մուտքագրելուց հետո դուք պետք է ծանոթանաք «Ինտերնետային տոմս գնելու կանոններին», եթե համաձայն եք, նշեք համապատասխան պատուհանը և գրանցվեք:

Այնուհետև մտեք մենյու, ընտրեք «Գնել տոմս» պատուհանը:



Քայլ 3. Գնացքի և ուղևորության տվյալների ընտրություն

Միջազգային գնացքների համար տոմսերի վաճառքը բացվում է գնացքի սկզբնակայանից մեկնելուց 40 օր առաջ:

Ուշադրություն: Գնացք ընտրելու պահից դուք ունեք ընդամենը 10 րոպե ուղևորներին գրանցելու, գումարը փոխանցելու և վճարելու համար: 10 րոպե անց տոմսի գնման ընթացակարգը կչեղարկվի, և եթե դուք գումար եք փոխանցել, այն կվերադարձվի քարտին:

Լրացրեք ուղևորության տվյալները. ամսաթվերը մեկնելու և հետադարձի՝ անհրաժեշտության դեպքում, մեկնման և նշանակման կայարանները:

- Միջազգային գնացքների տոմսերի քանակի ընտրություն.

  Մեծահասակների տոմսերն ընտրվում են 10 և ավելի տարեկան ուղևորների համար.

  Մանկական տոմսերն ընտրվում են 5-ից 10 տարեկան երեխաների համար: Մինչև 5 տարեկան երեխաներն ունեն անվճար երթևեկելու իրավունք, եթե ուղեկցող մեծահասակի հետ զբաղեցնում են մեկ նստատեղի՝ առանց առանձին տեղ զբաղեցնելու: Առանձին նստատեղի համար պետք է ձեռք բերել մանկական տոմս:

- Միջազգային գնացքների վագոնների կատեգորիայի ընտրություն.

  Երևան-Թբիլիսի-Երևան ուղևորագնացքի համար՝ ընտրվում է սովորական կատեգորիան.

  Երևան-Բաթումի-Երևան արագընթաց գնացքի համար ընտրվում է նախընտրելի կատեգորիան՝ սովորական կամ բարձր հարմարավետության:

- Միջազգային գնացքների համար վագոնի կարգի ընտրությունը կատարեք՝ կախված ձեր նախընտրած վագոնի տեսակից.

Պլացկարդ





Կուպե

ՍՎ /երկտեղանոց/

- Երևան- Գյումրի - Երևան արագընթաց էլեկտրագնացքի կարգը ընտրեք ընդհանուր:

Միջազգային գնացքների համար նշեք «մեկ կուպե», եթե ցանկանում եք երթևեկել մեկ կուպեում: Հիշեցում. CB վագոնում բոլոր կուպեները

երկտեղանոց են՝ երկու ուղևորի համար:

«Նայել/Դիտել գնացքը» կոճակը թույլ է տալիս ծանոթանալ տեղերի գտնվելու և համարակալմանը `ըստ միջազգային գնացքների վագոնների տեսակի:

CB վագոն /18 տեղ/: Բոլոր տեղերը ներքևում են “”, 2-ական տեղ յուրաքանչյուր կ ուպեում:



Կուպեավոր վագոն /36 տեղ/: Ներքևի տեղերն ունեն կենտ համարակալում /1, 3, 5 և այլն/, վերևինները՝ զույգ /2,4, 6 .../:



Պլացկարտ վագոն /54 նստատեղ/: Ներքևի տեղերն ունեն կենտ համարակալում 1, 3, 5 և այլն/, վերևինները՝ զույգ /2,4,6 .../: Կողային տեղերը՝ 37-ից 54:



Սեղմեք «Որոնում»:

Համակարգը ցույց կտա նշված ամսաթվի բոլոր մատչելի տարբերակները: Եթե տեղեկատվությունը չի համապատասխանում ձեր պահանջներին, սեղմեք «Կրկնակի որոնում» կոճակը և մուտքագրեք ուղևորության փոփոխված տվյալները:

Ընտրեք գնացքը, ընտրելու համար դուք ունեք մեկ րոպե

	Գնացքի համարը	Անվանումը	Վագոնի կարգը	Վագոնի համարը	Տեղերի համարները	Մեկնման կայարանը	Մեկնման ամսաթիվը	Ժամանման կայարանը	Ժամանման ամսաթիվը	Գինը /ընդհանուր/
	372	Երևան-Թբիլիսի-ուղևոր.	Կուպե	2	1,2,3	Երևան	08.12.2022 21:30	Թբիլիսի-ուղևոր.	09.12.2022 07:50	34700
Հակառակ ուղղությամբ										
	371	Թբիլիսի, ուղևոր. – Երևան	Կուպե	2	19.20.21	Թբիլիսի-ուղևոր	11.12.2022 20:20	Երևան	12.12.20220 6:55	34700

Տեղեկությանը ծանոթանալուց հետո նշեք գնացքի գիծը՝ սեղմելով կոճակը, որի համար ձեզ տրվում է մեկ րոպե:

Գնացքի գիծն ընդգծելուց հետո սեղմեք «Մուտքագրել ուղևորների տվյալները» կոճակը և անցեք հաջորդ փուլին:

Ընտրեք գնացքը, ընտրելու համար դուք ունեք մեկ րոպե

	Գնացքի համարը	Անվանումը	Վագոնի կարգը	Վագոնի համարը	Տեղերի համարները	Մեկնման կայարանը	Մեկնման ամսաթիվը	Ժամանման կայարանը	Ժամանման ամսաթիվը	Գինը /ընդհանուր/
	372	Երևան-Թբիլիսի, ուղևոր.	Կուպե	2	1,2,3	Երևան	08.12.2020 21:30	Թբիլիսի-ուղևոր	09.12.2020 07:50	34700
Обратно										
	371	Թբիլիսի,-ուղևոր. – Երևան	Կուպե	2	19.20.21	Թբիլիսի-, ուղևոր	11.12.2020 20:20	Երևան	12.12.2020 06:55	34700

Ввод данных пассажиров

Քայլ 4. Ուղևորների տվյալների մուտքագրում

Բացվում է «Ուղևորների տվյալների մուտքագրում» պատուհանը, որտեղ, ըստ ուղևորների քանակի, հայտնվում են տողեր, որոնցում անհրաժեշտ է լրացնել յուրաքանչյուր ուղևորի, այդ թվում՝ երեխաների տվյալները՝ ակտիվացնելով կոճակները :

Ուղևորներ

	Անուն, ազգանուն	Փաստաթղթի սերիան և համարը	Նստատեղի տեսակը
	Anahit Grigoryan	Oo 000000	մեծահասակների
	Hajk Grigoryan	Oo 000000	մեծահասակների
	Tigran Grigoryan	Oo 000000	մանկական

предыдущий | следующий

Տեղեկատվությունը կարող է ճշգրտվել նախքան վճարումը կատարելը:

Այնուհետև անցեք տոմսերի արժեքի վճարմանը:

- Եթե միջազգային գնացքների տոմսի ողջ երթուղին գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններում, ապա տոմսի արժեքին հաշվարկվում է ԱԱՀ:

Խնդրվում է իրականացնել գումարի տրանզակցիա						
Գնացքի համարը	Անվանումը	Վագոնի համարը	Վագոնի կարգը	Մեկնման ամսաթիվը	Ժամանման ամսաթիվը	Գինը /ընդհանուր/
372	Երևան-Թբիլիսի-ուղևոր.	2	Սովորական	08.12.2022 21:30	09.12.2022 07:50	34700
371	Թբիլիսի- ուղևոր. – Երևան	2	Սովորական	11.12.2022 20:20	12.12.2022 06:55	34700

Վճարումն իրականացնելու համար, կտտացնելով INECOBANK բանկի լոգոյին՝ անցեք վճարային քարտի տվյալների լրացմանը:

Քայլ 5. Վճարումը վճարային քարտով.

Բանկային քարտով առցանց վճարում կատարելու համար խնդրում ենք լրացնել Ձեր վճարային քարտի տվյալները

Վճարման գումարը /ՀՀ դրամ/

69400.00 AMD

Ձեր քարտի համարը

16 նիշ առանց բացատանիշի

Ձեր անունը

Ինչպես նշված է քարտում /օրինակ. MR NAME SURNAME)

Քարտի գործողության ավարտի ամսաթիվը

2024

Կոդ CVC2/CVV2:

Եռանիշ թիվ, որը նշված է քարտի հակառակ կողմում, ստորագրության դաշտի կողքին

ОПЛАТИТЬ

Բանկի միանվագ գաղտնաբառը նույնականացնելուց հետո դուք կստանաք գնման ութանիշ եզակի ծածկագիր և գործարքի հաջող ավարտի մասին հաղորդագրություն:

Ձեր անձնական գրասենյակի «Գնված տոմսերում» կտեսնեք գործարքի տվյալները:

Գնված տոմսեր Գնել տոմս Գնացքների ժամանակացույց Օգտագործման կանոնները Հրահանգ Պրոֆիլ Ելք

	Ծածկագիր	Գնացք	Գնացքի համարը	Մեկնման կայարանը	Մեկնման ամսաթիվը	Ժամանման կայարանը	Ժամանման ամսաթիվը	Վագոնի համարը	Վագոնի տեսակը	Նստատեղի համարները	Էլեկտրոնային տոմս	печата
+	23987577	Երևան-Թբիլիսի, ուղևոր.	372	Երևան	08.12.2022 21:30	ТБИЛИСИ-пасс.	09.12.2022 07:50	1		1,2,3	Այո	печата
+	2398757	Թբիլիսի, ուղևոր. – Երևան	371	Թբիլիսի, ուղևոր..	11.12.2022 20:20	ЕРЕВАН	12.12.2022 06:55	1		19,20,21	Այո	печата

Սեղմեք «տպել» և համակարգը ցույց կտա ձեր ուղևորության մասին ողջ տեղեկատվությունը. գնման եզակի ծածկագիրը, գնացքի անվանումը և համարը, մեկնման և ժամանման կայարանների անվանումները, գնացքի մեկնման և ժամանման ամսաթվերը, վագոնի և նստատեղի համարները, ուղևորների տվյալները:

Ուշադրություն !!! Ձեր գնման եզակի ծածկագիրը՝ 23987577

Գնացքի համարը	Անվանումը	Մեկնման կայարանը	Մեկնման ամսաթիվը	Ժամանման կայարանը	Ժամանման ամսաթիվը
372	Երևան-Թբիլիսի-ուղևոր.	Երևան	08.12.2022 21:30	Թբիլիսի- ուղևոր.	09.12.2022 07:50

Անուն, ազգանուն	Փաստաթղթի սերիան և համարը	Նստատեղի տեսակը	Վագոնի համարը	Նստատեղի համարը
Anahit Grigoryan	Oo 000000	մեծահասակի	2	1
Hajk Grigoryan	Oo 000000	մեծահասակի	2	2
Tigran Grigoryan	Oo 000000	մանկական	2	3

Գնացքի համարը	Անվանումը	Մեկնման կայարանը	Մեկնման ամսաթիվը	Ժամանման կայարանը	Ժամանման ամսաթիվը
371	Թբիլիսի, ուղևոր. – Երևան	Թբիլիսի, ուղևոր.	11.12.2022 20:20	Երևան	12.12.2022 06:55

Անուն, ազգանուն	Փաստաթղթի սերիան և համարը	Նստատեղի տեսակը	Վագոնի համարը	Նստատեղի համարը
Anahit Grigoryan	Oo 000000	մեծահասակի	2	19
Hajk Grigoryan	Oo 000000	մեծահասակի	2	20
Tigran Grigoryan	Oo 000000	մանկական	2	21

Դուք կարող եք տպել կամ պահպանել այս տեղեկատվությունը: Հաղորդագրությունը կուղարկվի ձեր էլեկտրոնային փոստին:

Գնացք նստելու համար բավական է ցույց տալ ուղեկցորդին եզակի ծածկագիրն ու ձեր անձնագիրը: Ուղեկցորդը տվյալ պահին կունենա լիարժեք տեղեկատվություն ձեր գործարքի/տրանզակցիայի վերաբերյալ:

Ուշադրություն. գնացք նստել թույլատրվում է միայն այն ուղևորներին, որոնց անձնական տվյալները նշված են գնված տոմսում:

Ինտերնետային տոմսի վերադարձ

Ինտերնետային տոմսերը կարող են վերադարձվել միայն առցանց ռեժիմում: Գնացքի մեկնումից 2 ժամ առաջ ինտերնատային տոմսը վերադարձման ենթակա չէ:

Ձեռք բերված ինտերնետային տոմսը վերադարձնելու համար մտեք «Ձեռք բերված տոմսեր» մենյու, կտտացրեք ձախից «+» պատկերանշանին, ներքևում կհայտնվի գնված տոմսերի տվյալներով տող եր: «Կարգավիճակ» սյունակում սեղմեք ⊖ կամ վերադարձի պատկերանշանին: Հաստատելով այս գործողությունը՝ գնված ինտերնետային տոմսը չեղարկվում է: Վճարային քարտին վերադարձվում վերադարձման ենթակա գումարը:

	Ծածկագիր	Գնացք	Գնացքի համարը	Մեկնման կայարանը	Մեկնման ամսաթիվը	Ժամանման կայարանը	Ժամանման ամսաթիվը	Վագոնի համարը	Վագոնի տեսակը	Նստատեղի համարները	Էլեկտրոնային տոմս	Տպել
-	23987577	Երևան-Թբիլիսի-ուղևոր.	372	Երևան-	08.12.2022 21:30	Թբիլիսի-ուղևոր.	09.12.2022 07:50	2	Կուպե	1,2,3	Այո	Տպել

Նստատեղի համարը	Անուն	Ազգանուն	Փաստաթղթի սերիան և համարը	Մանկական/ մեծահասակների	Գումարը	Կարգավիճակը	
1	Anahit	Grigoryan	Oo 0000000	մեծահասակի	7500,00	Գնված	⊖
2	Hajk	Grigoryan	Oo 0000000	մեծահասակի	7500,00	Գնված	⊖
3	Tigran	Grigoryan	Oo 0000000	մանկական	2500,00	Գնված	⊖

+	23987577	Թբիլիսի, ուղևոր. – Երևան	371	Թբիլիսի, ուղևոր	11.12.20202 20:20	Երևան	12.12.2022 06:55	1		19,20,21	Այո	Տպել

- Միջազգային հաղորդակցության տոմսեր վերադարձնելիս.
  Տոմսի գնից պահվում է ըստ հետևյալ սանդղակի.

Գնացքի մեկնումից	120 ժամ առաջ	0 տոկոս
	120-ից 24 ժամ առաջ	15 տոկոս
	24-ից 2 ժամ առաջ	25 տոկոս

Միջազգային գնացքների տոմսի վերադարձի ծառայության համար գանձվում է 780 դրամ:

Ծառայության արժեքը՝ 780 դրամը, որը գանձվել է միջազգային գնացքների տոմս գնելիս, չի վերադարձվում:

Վճարային քարտին գումար վերադարձնելու ժամկետը սահմանում է սպասարկող բանկը:

Գնված ինտերնետային տոմսի վերաձևակերպում հնարավոր է միայն տոմսը հետ վերադարձնելու պայմանով:

Ուշադրություն.

Առցանց ռեժիմով գնված միջազգային հաղորդակցության տոմսերը ենթակա չեն վերադարձման «ՀԿԵ» ՓԲԸ-ի և «ՎԵ» ԲԸ-ի տոմսարկղերում:

Գնացքներով երթևեկելու հետ կապված այլ հարցերը կարգավորվում են «ՀԿԵ» ՓԲԸ կանոններին համապատասխան:

Ինտերնետային տոմս գնելու կանոններ

1. Ընդհանուր դրույթներ

«Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ն /«ՀԿԵ» ՓԲԸ/ մատուցում է գնացքների ինտերնետային տոմսերի առցանց ռեժիմով գնման ծառայություն՝ պլաստիկ քարտի միջոցով:

Կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու համար ինտերնետային կայքում գրանցվելու ընթացակարգը կատարելիս խնդրում ենք պարտադիր ծանոթանալ ինտերնետ-տոմսի գնման կանոններին և հաստատել ծանոթությունը:

Այս Կանոնները պարունակում են էլեկտրոնային տոմսերի վաճառքի և վերադարձի պայմաններ:

Առցանց ռեժիմով կարելի է ձեռք բերել «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետևյալ գնացքների ինտերնետային տոմս. միջազգային հաղորդակցության Երևան-Թբիլիսի-Երևան, Երևան-Բաթում-Երևան գնացքների:

Ուղևորության վավերապայմանների և յուրաքանչյուր ուղևորի անձնական տվյալների ճշտության համար ողջ պատասխանատվությունը կրում է պատվերը ձևակերպող անձը:

2. Ինտերնետային տոմսի գնում

Ինտերնետով տոմս գնելու համար անհրաժեշտ է գրանցում կատարել https://www.railway.am/arm կայքի տոմսերի արցանց գնելու հարթակում:

Միջազգային գնացքների համար տոմսերի վաճառքը բացվում է սկզբնական կայարանից գնացքի մեկման ամսաթվից 40 օր առաջ:

Մեկ գործարքի միջոցով օգտատերը կարող է ձեռք բերել առավելագույնը 8 տոմս 4 ուղևորի համար՝ 4 տոմս մեկ ուղղությամբ և նույն ուղևորների համար 4 տոմս՝ հակառակ ուղղությամբ:

Խնդրում ենք պատվերի մեջ ուշադիր լրացնել նշված բոլոր ուղևորների տվյալները: Պատվերի վճարման կարգը կատարելուց առաջ ևս մեկ անգամ համոզվեք, որ նշված տեղեկատվությունը ճիշտ է:

Միջազգային գնացքների մանկական տոմսերը վաճառվում են մեծահասակների տոմսերի հետ միասին, միայն մանկական տոմս հնարավոր չէ գնել:

Հակառակ ուղղությամբ միջազգային գնացքների տոմսերի վաճառքը դադարում է գնացքի մեկնումից 10 օր առաջ:

Վճարում իրականացնելու համար անհրաժեշտ է անցնել բանկի կողմից սահմանված բոլոր ընթացակարգերը:

Եթե միջազգային գնացքների տոմսի ողջ երթուղին գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններում, ապա տոմսի արժեքին հաշվարկվում է ԱԱՀ:

Ուշադրություն. Գնացք ընտրելու պահից դուք ունեք ընդամենը **10** րոպե ուղևորների տվյալները գրանցելու, տոմսերը փոխանցելու և վճարումն իրականացնելու համար: **10** րոպեն լրանալուց հետո տոմսի գնման կարգը կչեղարկվի, և եթե գումար եք փոխանցել, այն կվերադարձվի քարտին:

Գործարքի հաջող ավարտից հետո ուղևորը ստանում է տեղեկատվություն գնված տոմսերի մասին՝ ուղևորության վերաբերյալ տվյալների հետ միասին. գնման եզակի ծածկագիր, գնացքի անվանումը և համարը, մեկնման և նշանակման կայանները, մեկնելու և ժամանման ամսաթվերը և ժամերը, վագոնի և նստատեղի համարները, ուղևորի տվյալները: Այս տեղեկատվությունը կարող եք տպել կամ պահպանել:

Ինտերնետային տոմս գնելու մասին հաղորդագրություն կուղարկվի գրանցման մեջ նշված էլ-փոստի հասցեին:

Ստուգեք էլեկտրոնային տոմսերի առկայությունը ձեր անձնական գրասենյակում:

3. Գնացք նստելը

Ինտերնետային տոմս ունեցող ուղևորները կարող են գնացք նստել՝ ներկայացնելով վագոնի ուղեկցորդին գնված տոմսում նշված եզակի ծածկագիրը և ուղևորի անձնագիրը:

Արտակարգ իրավիճակների դեպքում գնացքի ժամանակացույցի փոփոխությունների մասին տեղեկացնելու համար ուղևորի տվյալները լրացնելիս նշեք ձեր բջջային հեռախոսահամարը և/կամ էլ.փոստի հասցեն:

4. Ինտերնետ տոմսի վերադարձ

Ինտերնետային տոմսերը կարող են վերադարձվել միայն առցանց ռեժիմով՝Հրահանգներին համապատասխան:

Տոմսի վերադարձը դադարեցվում է գնացքի մեկնումից 2 ժամ առաջ:

Միջազգային հաղորդակցության տոմսերի վերադարձի դեպքում տոմսի արժեքից պահվում է հետևյալ սանդղակով.

Գնացքի մեկնումից առաջ.	- 120 ժամ առաջ	0 տոկոս
	- 120-ից մինչև до 24 ժամ առաջ	15 տոկոս
	- 24-ից մինչև 2 ժամ առաջ	25 տոկոս

Միջազգային գնացքների տոմսի վերադարձի տրամադրման ծառայության համար գանձվում է 780 դրամ:

Ծառայության արժեքը՝ 780 դրամը, որը գանձվել է միջազգային գնացքների տոմս գնելիս, չի վերադարձվում:

Վճարային քարտին գումար վերադարձնելու ժամկետը սահմանում է սպասարկող բանկը:

Գնված ինտերնետային տոմսի վերաձևակերպում հնարավոր է միայն տոմսը հետ վերադարձնելու պայմանով:

Ուշադրություն.

Առցանց ռեժիմով գնված միջազգային հաղորդակցության տոմսերը ենթակա չեն վերադարձման «ՀԿԵ» ՓԲԸ-ի և «ՎԵ» ԲԸ-ի տոմսարկղերում:

Գնված ինտերնետային տոմսի վերաձևակերպումը հնարավոր է միայն այն վերադարձնելու և նոր տոմս գնելու դեպքում:

Գնացքներով երթևեկելու հետ կապված այլ հարցերը կարգավորվում են «ՀԿԵ» ՓԲԸ կանոններին համապատասխան: